REPUBLIC OF ARMENIA
Ministry of Territorial Administration and Infrastructure
Closed Joint - Stock Company
"Armenian scientific – Research Institute for Nuclear Power Plant operation"
"ARMATOM"

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Министерство территориального управления и инфраструктур
Закрытое акционерное общество
"Армянский научно-исследовательский институт по эксплуатации атомных электростанций"
«АРМАТОМ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ»
Փակ բաժնետիրական ընկերություն
«ՀԱՅԱՏՈՄ»

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ

03.10.2023թ.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 1765-Ա, առ 04.09.2023թ. հրամանի, 2022թ. սեպտեմբերի 24-ից 29-ը գործուղվել եմ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), մասնակցելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Գլխավոր համաժողովի 67-րդ նստաշրջանի, ինչպես նաև «Nuclear Innovations for Net Zero» գիտական ֆորումի աշխատանքներին:

Ս.թ. սեպտեմբերի 25-ից մեկնարկեց ԱԷՄԳ 67-րդ Գլխավոր համաժողովի աշխատանքները: Ողջունելով 67-րդ նստաշրջանի մասնակիցներին, ԱԷՄԳ Գլխավոր տնօրեն պարոն Ռաֆայել Գրոսին իր ելույթում անդրադարձավ՝

1. Միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործման ապահովման խնդիրներին;
2. Վերջին մեկ տարում ատոմային էներգիայի բնագավառում տիրող մարտահրավերներին, այդ կոնտեքստում միջուկային զենքի չտարածման խնդիրներին և դրա հետ կապված միջուկային զենքի կիրառման ռիսկերին;
3. Ռադիոիզոտոպերի կիրառումը տարբեր երկրների ուռուցքաբանական կենտրոններում և այդ բնագավառում ԱԷՄԳ կողմից տարվող աշխատանքներին;
4. Շրջակա միջավայրի պաշտպանության, գլոբալ տաքացման խնդիրներին և այդ համատեքստում ԱԷԿ-ների կարևորությանը;
5. Փոքր մոդուլային ռեակտորներով ԱԷԿ-ների կիրառության ու զարգացման հնարավորություններին և այլն:

Պարոն Ռաֆայել Գրոսին իր ելույթում անդրադարձավ աշխարհում տիրող տարբեր լարված մարտահրավերներին՝ Մերձավոր արևելքում, Ռուսաստան-

Ուկրաինայում տիրող իրավիճակին և այդ տարածաշրջանում ԱԷՄԳ կողմից տարվող աշխատանքներին:

Այնուհետև Գլխավոր համաժողովը հաստատեց ԱԷՄԳ կառավարման խորհրդի առաջարկը՝ պրն. Ռ. Գրոսիին ԱԷՄԳ Գլխավոր տնօրենի պաշտոնում երկրորդ անգամ վերընտրելու կապակցությամբ:

Համաձայն նախապես մշակված գրաֆիկի, զեկույցով հանդես եկան բոլոր մասնակից երկրների պատվիրակությունների ղեկավարները, այդ թվում նաև մեր հարևան պետությունների պատվիրակության ղեկավարները՝ Իրան, Թուրքիա, Ադրբեջան:

Ինչպես միշտ, այս անգամ ևս Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը՝ Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալն իր ելույթում ներկայացրեց, որ «Մեծամորի ատոմակայանը կառուցված է սեյսմիկ գոտում, հին տեխնոլոգիայով և վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համար, առաջարկելով ԱԷՄԳ հսկողության տակ վերցնել և դիտարկել կայանի հետագա շահագործման նպատակահարմարությունը»:

Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան դիվանագետները, ՀՀ պատվիրակության հետ համատեղ, օգտվելով ձայնի իրավունքից, դիպուկ պատասխան հնչեցրեցին Ադրբեջանի պատվիրակության կողմից ներկայացված անհիմն տեղեկատվությանը:

ՀՀ պատվիրակությունից սեպտեմբերի 27-ին ելույթ ունեցավ Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ դեսպան, ԱԷՄԳ մշտական ներկայացուցիչ Արման Պապիկյանը, նշելով, որ 30 տարի շարունակ ՀՀ արդյունավետ համագործակցում է ԱԷՄԳ հետ: Դեսպանն անդրադարձավ Հայկական ԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացման գործընթացում ԱԷՄԳ դերակատարությանը և ցուցաբերած աջակցությանը, վստահություն հայտնեց ՀՀ և ԱԷՄԳ հետագա սերտ համագործակցության խնդիրների առնչությամբ:

Գլխավոր համաժողովը սեպտեմբերի 28-ին քննարկեց և ընդունեց որոշում՝ 9 երկրների 2 տարի ժամկետով ընդունել ԱԷՄԳ Կառավարման խորհրդի անդամ:

Մրցութային կարգով՝ փակ, գաղտնի քվեարկությամբ (2 տեղի համար մրցակցում էին Հայաստանը, Ուկրաինան և Ադրբեջանը), Հայաստանի Հանրապետությունը (ձայների մեծամասնությամբ) և Ուկրաինան երկու տարի ժամկետով նույնպես ընտրվեցին ԱԷՄԳ Կառավարման խորհրդի անդամ:

Գլխավոր կոնֆերանսի շրջանակներում, մեր պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Եվրոմիության ներկայացուցիչների հետ, ուր քննարկվեցին ՀԱԷԿ-ի առաջիկա տարիներին իրականացվող նախագծերի հնարավոր ֆինանսական աջակցության վերաբերյալ խնդիրները: Հայկական պատվիրակությունը գրավոր ներկայացրեց այդ առաջարկների ցանկը:

Մեր պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Հորդանանի, Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակների հետ, ուր քննարկվեցին փոխադարձ համագործակցության հարցեր ատոմային էներգիայի բնագավառում:

Գլխավոր կոնֆերանսի շրջանակներում, մասնակցել եմ ԱԷՄԳ Գիտական ֆորում 2023թ.՝ «Nuclear Innovations for Net Zero», “10-th Global Nuclear Safety and Security Network (GNSSN) Plenary Meeting”-ի աշխատանքներին, ինչպես նաև ՌԴ «ՏՎԷԼ» ԲԸ կողմից կազմակերպվող «ԱՊՀ անդամ պետություններում միջուկային ժառանգության օբյեկտներ. համագործակցության հեռանկարները և փորձը» թեմայով միջոցառմանը:

Մասնակցել եմ նաև Հայաստանի Հանրապետության ԱԷՄԳ անդամակցության 30-ամյակին նվիրված միջոցառմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

0004 ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 50/12
г. Ереван, пр. Адмирала Исакова, 50/12
50/12 Admiral Isakov ave., Yerevan

Phone: (37410) 74-21-30
Fax: (37410) 73-46-10
E-mail: armatom@ armatom.am